

մասին հարցումներ ալ կ'աւելցուին:

Եւ այս բոլորէն յայտնի կը տեսնուի թէ ֆիզիքական ու բարոյական թեթեւութիւն ունեցողներ չեն կրնար քահանայ ձեռնադրուիլ:

Գալով երկրորդ հարցումին, պատասխանը երկու է: Եթէ քահանայացուն նախ քան զձեռնադրութիւն արդէն հիւանդ էր լուսնոտութեան ախտով, և զայն ձածկելով, սուտ վկայութիւն տուին անոր արժանաւորութեան մասին, և խաբէութեամբ ձեռնադրել տուին, այդ ձեռնադրութիւնը անվաւեր է նովին իսկ գործով: Վասն զի սուտ վկայութեան վրայ հիմնուած է:

Իսկ եթէ քահանայացուն ունէ հիւանդութիւն և ախտ չունէր ձեռնադրութենէ յառաջ, եւ յետոյ՝ իր քահանայութեան ընթացքին ունեցաւ այդ հիւանդութիւնը, այս պարագային կը զազրի քահանայագործելէ, պահելով հանգըմ իր քահանայական կարգը և ապրուստի իրաւունքը գոհացուցիչ չափով մը:

զեկութիւններն, այսպէս է գրում Հայոց եկեղեցւոյ Պահոյ առնչութեամբ: — «Altogether they have 100 fast days and 117 abstinence days in the year». (SMALLER LESSER EASTERN CHURCHES, Catholic Truth Society, London, 1913, էջ 438): Այս նշանակում է 277 Պահոյ օրեր առ տարին, անկարելի մի համապատասխան մինչդեռ, իւրօք, Բովանդակն հոյ Կառաւել քան 157 օր, որպէս ունինք տեսանել:

Արդարեւ՝ զարմանալի չէ որ օտար պատմիչք յաճախ վրիպում են իւրեանց հրատարակեալ գրութեաններին մէջ, երբ նոյն իսկ Օրմանեան Սրբազան, իւր Հայոց եկեղեցւոյ Պատմութեան մէջ (ըստ Անգղիերէն թարգմանութեանն, տպագրեալ ի Լոնդոն, յամին 1912), կարի հակիրճ եւ զրեթէ անցողակի կերպիւ, այսպէս է գրում Հայոց եկեղեցւոյ Պահոյ մասին (զոր մեք, ահաւասիկ, թարգմանում ենք Հայերէնի ի ներքոյ, և որոյ ընդգծումներն մերն են): — «Հայոց Տօմարին մէջ Պահոյ օրերն բազում են: Նախ և յառաջ, երկու օր առ շաբաթն, Զորեքշաբթի և Ուրբաթ պարզ պահոյ օրեր են: Զատիկական Պահքն տեսում է 48 օր առանց ընդմիջեցման, Աւգուստացից երկուշաբաթ օրէն սկսեալ մինչև Աւագ Շաբաթ օրն: Յետի քան զայդ, տասն շաբաթապահք կան առ տարին՝ կամ մօտաւորապէս մի շաբաթ առ ամիսն, իւրաքանչիւր շաբաթ ընդգրկելով հինգ կամ վեց օր: Բովանդակն կարելի է հաշուել մի ճիշտիւր եւ վարսուն պարզ պահոյ կամ ժուժ-«կալութեան» (abstinence) օրեր, որպէս համապատասխան առ տարին: Օրմանեան Սրբազան բաւականանալով այսչափն միայն յիշատակել մեր Պահոյ մասին, այսինքն առանց լուրջ բացատրութեան եւ առանց վերլուծելոյ և զեղչելոյ կրկնութիւնքն ուր պէտք են, օտարներին վարած է խոտորնակի՝ իւրեանց եզրակացութեանց մէջ: Նաևս, անիմանալի է ինձ թէ նա ո՞ր գրտաւ վեցօրեայ շաբաթապահքն, քանզի որչափ յայտնի է ինձ՝ չկարծեմ թէ այդ գոյութիւն ունի մեր եկեղեցւոյ դասանեալ կանոնական Օրինաց տնօրէնութեանց մէջ: Ըստ մեր եկեղեցական Տարեցոյցներին, արդեամբ, Զորեքշաբաթ և Ուրբաթ պարգեամբ, Զորեքշաբաթ և Ուրբաթ պահոյ օրերն ոչ են աւել քան 91, քանզի հոց օրերն ոչ են աւել քան 104 Զորեքշաբաթ թէև տարւոյն մէջ ունին 104 Զորեքշաբաթ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՀՈՅ ԱԻՈՒՐՔ

Օտար պատմագիրք, երբ իւրեանց տեսութիւններն ի զիր են անցուցանում՝ վերաբերութեամբ Արեւելեան եկեղեցեաց ծիսից և արարողութեանց (ի միջի որոց և Հայաստանեայց եկեղեցւոյ), ընդհանրապէս կամ հետեւում են ուրիշ օտար նախորդաց գրածներին և կամ, աստ և անդ, ըստ զի պոգութեան պատեհութեանց՝ անձամբ հաւաքում են իւրեանց ծանօթութիւններն երկրորդական խուզարկութեամբ, և երբեմն ապէս՝ թարգմանաբար փոխառութեամբ Հայկական պատմագրական աղբիւրներից: Աւստի՝ սպասելի է որ բազմիցս իւրեանց կարծիքներն յակամայիցս մասամբ անուղիղ են, նա մանաւանդ երբ նոյն իսկ բուն աղբիւրներն, թերեւ արդիւնք հապճեպ ուսումնասիրութեանց, բոլորովին ճշգրիտ չեն, ուստի և ոչ շատ վստահելի:

Առ ի ապացուցանել զոր ասացինք ի վեր, յիշենք մէկ օրինակ միայն: Անգղիացի հմուտ աստուածաբան և դիտնական եկեղեցականն Dr. Adrian Fortesque, որ անտեղեակ էր Հայոց լեզուին (որպէս և ինքնին խոստովանի իւր նախաբանին մէջ), արտաքին օտար արձանագրեալ աղբիւրներից, գրոյցներից, և աստ և անդ՝ Հայկական պատմիչներից քաղելով իւր տես-

և Ուրբաթ (52 Չորեքշաբթի + 52 Ուրբաթ = 104), սակայն չպիտի մոռանանք որ (ա) Սուրբ Ծննդեան օրից անմիջապէս զկնի «ուտիք է մեզ 8 օր անմիջոց», այսինքն՝ այդ ութօրեայ ժամանակամիջոցի մէջ Չորեքշաբթին և Ուրբաթն ուտիք է մեզ = 2 օր, և (բ) Սուրբ Զատիկի օրից յետոյ «ուտիք է մեզ մինչև ցՀամբարձումն», այսինքն այդ քառասնօրեայ ժամանակամիջոցին մէջ ունինք բոլորն ի միասին, 11 Չորեքշաբթի և Ուրբաթ, որք պահնոց օրեր լին: Ուտի, (ա) 2 օր + (բ) 11 օր = 13 օր, զոր զեղչելով 104ից, մնում է 91 օր: Սրտաբոյ քան այդ 91 օր Չորեքշաբթի և Ուրբաթ օրերէն, ունինք այլ ևս ուրիշ զուտ 66 պահնոց օրեր միայն (որպէս ունինք տեսանել) = 157 պահնոց օրեր, ընդ ամենայնն առ տարին:

Մեր կանոնական պարբերական պահնոց աւուրքն են:—

|                                                                                                                                                                                                                                    |  |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--|
| (ա) Հնգօրեայ: 1, Առաջաւորաց. 2, Եղիական. 3, Սուրբ Լուսաւորչի (Գիւտ Նշխարացն). 4, Վարդապետի. 5, Ս. Աստուածածնի (Վերափոխումն). 6, Սուրբ Խաչի (Քաջկերպաց). 7, Վարազայ Սուրբ Խաչի. 8, Յիսնակաց. և 9, Սուրբ Յակովբայ: Ուտի, 5x5 = 45 օր |  |
| (բ) Սուրբ Մննդեան Պահ: 7 »                                                                                                                                                                                                         |  |
| (գ) Մեծ Պահ: 48 »                                                                                                                                                                                                                  |  |
| Համագումար, 100 »                                                                                                                                                                                                                  |  |

Ասացինք որ արտաբոյ քան Չորեքշաբթի և Ուրբաթ օրերէն, ուրիշ պահնոց օրերն ոչ են յաւել քան 66, որոյ առ պահնոց պարտինք բացատրել որ բոս ուրում վերջիչեալ մետասան պարբերական Պահքերն (100 օր) բովանդակում են տասն Շաբաթապահնոց մէջ զիպիլի տասն Չորեքշաբթի և տասն Ուրբաթ օրերն (= 20 օր), և Մեծ Պահնոց մէջ և՛ Չորեքշաբթի և և՛ Ուրբաթ օրերն (= 14 օր), ուտի 20 + 14 = 34 զեղչելով 104ից = 66:

|                                                           |    |
|-----------------------------------------------------------|----|
| Եզրակացութիւն                                             | 0ր |
| Չորեքշաբ. և Ուրբ. օրեր, առ տարին, 104                     |    |
| Տասն Շաբաթապահնոց (ինն հնգօրեայ և [մի և՛ Չորեքշաբթի]), 52 |    |
| Մեծ Պահք                                                  | 48 |
| Համագումար, 204                                           |    |
| Գրտենք որ վերջիչեալ Չորեքշաբթի և                          |    |

Ուրբաթ օրերից ամանք արդէն բովանդակուած են տասն Շաբաթապահնոց մէջ (= 20 օր) և ամանք Մեծ Պահնոց մէջ (= 14 օր): Յետոյ ունինք 13 օր ունիք Չորեքշաբթի և Ուրբաթ: Ուտի 20 + 14 + 13 = 47 պիտի զեղչենք համագումարիցն, այսինքն 204—47=157 օր, որպէս ամբողջութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ Պահնոց աւուրքն առ տարին:

Լոնգուն

Ս. Տէր Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

## ԳՐԻԳՐԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Ա.

ԳՐԻԳՐԻ ՄՈՒՍԱՐԷԿԵԱՆ

(1119-1151?)

Վերջին Լեւոնի թագաւորութիւնը հազիւ տեսած էր տարի մը 1374-75 (+ 1313) իսկ թագաւորական շրջանին վերջին կաթողիկոսն էր Պօղոս Ա. Սսեցի (1374-82):

Պօղոսէն ետքը, Կիլիկիոյ վերջնական Լորձանման շրջանին, վեց կաթողիկոսներ յաջորդեցին իրարու, 1382էն մինչև 1439 (Թեոդորոս Բ., Կարապէս Ա., Յակոբ Գ., Գրիգոր Ը., Պօղոս Բ., և Կոստանդին Զ.), և 1439-ին կաթողիկոսական աթոռին վերայ կը գտնենք Գրիգոր Թ. Մուսարեկեանը:

Մուսարեկեանի անցեալին վրայ պատմական օրեւէ զոհացուցիչ տեղեկութիւն չէ հասած մեզի:

Թովմա Մեծփեցին, որ 1441-ին էջմիածնի աթոռին վերահաստատութեան շարժումին պարագլուխն է, իրրեւ ժամանակակից պատմագիր, զրելու ատեն այդ շարժումին պատմութիւնը, տեղեկութիւններ մը կուտայ Մուսարեկեանի և անոր յաջորդ Կարապետ Եղոկացիի մասին: Բայց անաչառ և անկողմնակալ պատմագրող մը չէ Մեծփեցին. և այնքան թշնամանքով և տխուր գոչներով կը նկարագրէ Կիլիկիոյ աթոռին ղէպքերն ու ղէմքերը որ իրաւունք կուտայ մեզ վերապահութեամբ օգտուիլ իր տեղեկութիւններէն:

Մեծփեցին սաչափ միայն կը զրէ Մուսարեկեանի մասին. — «Տէր Կոստանդին կաթողիկոսն Սոայ գնաց առ Աստուած (Կակնարկէ Կոստանդին Զ. Վանկացիին 1430—39). և Գրիգոր անուն ևսկիսկոպոս մի զնեն կաթողիկոս»: